ՀՈՒՆԻՍԻ ՄԵԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ «ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ» ԹԵՄԱՅՈՎ

23.05.2024 14:48

Հարգելի՛ փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատը Երեխաների իրավունքների պաշտպանության տոնին ընդառաջ 7-ից 15 տարեկան երեխաների համար հայտարարում է **«ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ»** խորագրով շարադրությունների մրցույթ:

Շարադրությունները չունեն տեքստային կամ քանակական սահմանափակում:

Խնդրում ենք աշխատանքներն ուղարկել press@advocates.am հասցեին **մինչև մայիսի 29-ը**՝ ստեղծագործական աշխատանքին կից նշելով երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, դպրոցի անվանումը, դասարանը և հեռախոսահամար:

Արդյունքները ստուգվելու են Երևանի պետական համալսարանի բանասիրության և Հայ-Ռուսական համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի մասնագետների կողմից և անաչառության սկզբունքը պահպանելու համար ստուգող հանձնաժողովում չի լինելու ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչ:

Լավագույն շարադրությունների հեղինակներին մրցանակները կհանձնվեն հունիսի մեկին կայանալիք միջոցառումների ընթացքում:

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Սիլվի Տիգրանյանի հետ՝ 010 600 704 (ներքին համար՝ 113) կամ 077 96 06 37 հեռախոսահամարներով:

Մաղթում ենք հաջողություն Ձեր երեխային:

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի մամուլի ծառայություն

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })